ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/1052/02/25

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

19 փետրվարի 2025թ. | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Փախանյան ընդ Փարթներս» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Վեդիի համայնքապետարանի՝ «Փախանյան ընդ Փարթներս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 07.01.2025թ. թիվ 11-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑԻ

«Փախանյան ընդ Փարթներս» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2025թ. փետրվարի 5-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Վեդիի համայնքապետարանի՝ «Փախանյան ընդ Փարթներս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 07.01.2025թ. թիվ 11-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Դատարանի (դատավոր Ա. Ճիլաջյան) 2025թ. փետրվարի 10-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
Որոշումը ստանալուց հետո՝ 2025թ. փետրվարի 13-ին, հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան:
Կրկին ներկայացված հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2025թ. փետրվարի 14-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2025թ. փետրվարի 17-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Հետևաբար՝ հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2025թ. փետրվարի 5-ին:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Փախանյան ընդ Փարթներս» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Վեդիի համայնքապետարանի՝ «Փախանյան ընդ Փարթներս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 07.01.2025թ. թիվ 11-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2025թ. փետրվարի 5-ին:
Թիվ ԵԴ2/1052/02/25 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թ. մարտի 14-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2025.02.19 16:51:15 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am